Արձանագրություն N 3
«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «16» «հոկտեմբերի» 2018թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Դանիելյան
Հանձնաժողովի անդամներ՝ Է.Միրոյան, Կ.Մկրտչյան, Հ.Սարգսյան, Մ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Միրզոյան
Բացակայում էին՝

1. Աշխատանքային օրերը տեղափոխելու ՀՀ կառավարության որոշման մասին

ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 1101-Ն որոշմամբ 2018 թվականի հոկտեմբերի 11-ի և 12-ի աշխատանքային օրերը տեղափոխվել են համապատասխանաբար 2018 թվականի հոկտեմբերի 27 և նոյեմբերի 3։

Վերոհիշյալ ոչ աշխատանքային օրերը համընկել են «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման ժամանակահատվածի հետ /հոկտեմբերի 10-12/, ինչի հետևանքով որակավորման փաստաթղթերի ներկայացման ժամանակահատվածը պետք է սահմանվեր հոկտեմբերի 16-ը /հոկտեմբերի 10, 15, 16/։ Սակայն, էլեկտրոնային աճուրդի համակարգում աշխատանքային օրերի տեղափոխում չի իրականացվել, ինչի հետևանքով սահմանափակվել է որոշ մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերի ժամանակին ներկայացման հնարավորությունը /հիմք ընկերությունների գրություններ/։

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0։

2. **«ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին**

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի և 20-րդ կետի դրույթներով՝ հանձնաժողովը որոշեց. N 13-18, 27 և 29 չափաբաժինների մասով ընտված մասնակից ճանաչել **«Կուրացիո» ՍՊ** ընկերությանը։

2.2 Մնացած մասնակիցների կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- **«Անիկո-Ֆարմ» ՍՊ** ընկերության 7, 8, 10, 11, 20, 21, 22 և 23 չափաբաժինների մասով առկա է 1-ին կետում ներկայացված խնդիրը, ինչպես նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ օրենքով նախատեսված շեմը գերազանցող 34.235 ՀՀ դրամ ժամկետանց

պարտավորություններ /մասնակցի գնային առաջարկի նկատմամբ առավելագույն թույլատրելի շեմ 1.15 ՀՀ դրամ/,

- **«Էսզեթ-Ֆարմա» ՍՊ** ընկերության 31 և 32 չափաբաժինների մասով առկա է 1-ին կետում ներկայացված խնդիրը,
- **«Լաէկա» ՀՁ ՍՊ** ընկերության 37 և 39 չափաբաժինների մասով առկա է 1-ին կետում ներկայացված խնդիրը,
- **«Յունիմեդ» ՍՊ** ընկերության 47 չափաբաժնի մասով առկա է 1-ին կետում ներկայացված խնդիրը,
- **«Մարգ-Ֆարմացիա» ՍՊ** ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող 475.910 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություններ / մասնակցի գնային առաջարկի նկատմամբ առավելագույն թույլատրելի շեմ 50.000 ՀՀ դրամ/, ինչպես նաև 45-րդ չափաաբաժնում հստակ թերի է ներկայացված խտությունը, 46-րդ չափաբաժնում՝ լարի երկարությունը,
- **«Լինարե» ՍՊ** ընկերության 1-ին չափաբաժնի մասով բացակայում է տեղեկատվությունը պիտանելիության ժամկետի վերաբերյալ, 2-րդ և 3-րդ չափաբաժիններում՝ պիտանելիության ժամկետի և որակի սերտիֆիկատների առկայության վերաբերյալ,
- **«Նատալի Ֆարմ» ՍՊ** ընկերության 9, 12, 19, 24, 26, 28, 30 չափաբաժինների մասով բացակայում է տեղեկատվությունը պիտանելիության ժամկետի վերաբերյալ, 38-րդ չափաբաժնի մասով՝ պիտանելիության ժամկետի և որակի սերտիֆիկատների առկայության վերաբերյալ,
- **«Ար Մեդիկա» ՍՊ** ընկերության 36-րդ չափաբաժնի մասով բացակայում է տեղեկատվությունը պիտանելիության ժամկետի վերաբերյալ,
- **«Պրոֆտեստ» ՍՊ** ընկերության 42-րդ չափաբաժնի մասով ներքին տրամագիծը չի համապատասխանում հրավերով սահմանված չափսին և բացակայում է տեղեկատվությունը պիտանելիության ժամկետի վերաբերյալ, 43-րդ և 44-րդ չափաբաժինների մասով բացակայում է տեղեկատվությունը պիտանելիության ժամկետի վերաբերյալ։

2.3 Հիմք ընդունելով «ԷԱՃԱՊՁԲ-2018/16-3-ԵՊԲՀ» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «Անիկո-Ֆարմ» ՍՊ, «Էսզեթ-Ֆարմա» ՍՊ, «Լաէկա» ՀՁ ՍՊ և «Յունիմեդ» ՍՊ ընկերությունների գրությունները՝ հանձնաժողովը որոշեց որակավորման փաստաթղթերի ներկայացման հնարավորություն ընձեռել վերոհիշյալ մասնակիցներին։

2.4 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեխնիկական բնութագրերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման հնարավորություն ընձեռել «Մարգ-Ֆարմացիա» ՍՊ ընկերությանը՝ 45 և 46 չափաբաժինների մասով,

«Լինարե» ՍՊ ընկերությանը՝ 1, 2 և 3 չափաբաժինների մասով, «Նատալի Ֆարմ» ՍՊ ընկերությանը՝ 9, 12, 19, 24, 26, 28, 30 և 38 չափաբաժինների մասով, «Ար Մեդիկա» ՍՊ ընկերությանը՝ 36 չափաբաժնի մասով, «Պրոֆտեստ» ՍՊ ընկերությանը՝ 42, 43 և 44 չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. **Պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ղեկավարվելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետով՝ անգործության ժամկետ չի սահմանվում և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան «Կուրացիո» ՍՊ ընկերության հետ կնքվելու է գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. **Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լ.Դանիելյան

Անդամներ՝ _____ Է.Միրոյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Հ.Սարգսյան

_____ Մ.Գրիգորյան

Քարտուղար՝ _____ Տ.Միրզոյան